

ք.Եղեգնաձոր

18.01.2017թ.

ՁՈՀՎԱԾ՝ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ՁԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՌԻՍՈՒՄԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԱՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը հանձնաժողովի անդամներ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Գրիգորյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խ.Գևորգյանը, քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ռ.Մինասյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի մարզպետի խորհրդական Վ.Ասլանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի քաղաքապետի տեղակալ Վ.Ավագյանը, Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ.Թադևոսյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանը, Վայոց ձորի մարզի ԵԿՄ նախագահ Թ. Ավետյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ Յ. Բաբայանը / քարտուղար/:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Վայքի քաղաքապետարանի կողմից հերթագրված Տարոն Նահապետի Կարապետյանի, Խաչիկի համայնքապետարանի կողմից հերթագրված Ալիկ Նորայրի Աբրահամյանի, Եղեգնաձորի քաղաքապետարանի կողմից հերթագրված Հայկ Սեփուխյանի գործերը ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 947-Ն որոշման համաձայն 2016թվականի հերթացուցակում ընդգրկելու վերաբերյալ

2. ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 947-Ն որոշման հիման վրա ՀՀ ՊՆ 20.03.2014 թվականի թիվ 267 հրամանով ստեղծված հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքներին, նրանց հավասարեցված անձանց անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրող հանձնաժողովի 07.12.2016թ նիստի որոշումը Աղավնի Սարգսյանին և Սերգեյ Մինասի Ղուլյանի գործերը հերթացուցակից հանելու վերաբերյալ:

Լսեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց Տարոն Նահապետի Կարապետյանի, Ալիկ Նորայրի Աբրահամյանի, Հայկ Սեփուխյանի գործերը:

Փաստաթղթերը ուսումնասիրելու ընթացքում հանձնաժողով նպատակահարմար գտավ Վայք քաղաքի բնակիչ Տարոն Նահապետի Կարապետյանի /մահացել է զինծառայության ընթացքում/ ծնողներին և կնոջն ու աղջկան ,հերթագրել որպես առանձին շահառուներ: Միաժամանակ հաշվի առնելով Հայկ Սեփուխյանի գործում առկա Եղեգնաձորի քաղաքապետարանի որոշումը՝ հանձնաժողովը որոշեց այն ընդգրկել 2016 թվականի հերթացուցակում:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Տարոն Նահապետի Կարապետյանի /2 գործ/, Ալիկ Նորայրի Աբրահամյանի, Հայկ Սեփուլյանի գործերը ընդգրկել 2016 թվականի հերթացուցակում և ներկայացնել ՀՀ ՊՆ :
2. Եղեգնաձորի քաղաքապետարանին, Զատիթափի համայնքապետարանին ինչպես նաև Աղավնի Սարգսյանին, Սերգեյ Մինասի Ղուլյանի իրավահաջորդ Ռեգինա Մուսվյանին գրավոր տեղեկացնել ՀՀ ՊՆ հանձնաժողովի որոշման մասին:

Հանձնաժողովի նախագահ

Քարտուղար

Մ. Հարությունյան

Յ. Բարայան